

Մ. Մ Կ Ր Յ Ա Ն

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԳԱՂԱՓԱՐԸ ՈՒ ՆՐԱ ԾՆՍԾ ՀԵՐՈՍՆԵՐԸ
Վ ԴԱՐԻ ՀԱՅ ՊԱՏՄԻՉՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՒՄ

—

9(47.925)

υ-80

5177.

Մկրտիչ

Հայոց գովազնութեան
մասին Տառապահութեան

26/53 6/56 380

Վ. Մ. ՄՈԼՈՅՈՎԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ

9(47915)143

~~15-80~~

Մ. Մ Կ Ր Յ Ա Ն

ԱՅԼԻԳՎԱԾ Է 1961 թ.

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԳԱՂԱՓԱՐԸ ՈՒ ՆՐԱ ՑԱՆՑ ՀԵՐՈՍՆԵՐԸ
Վ ԴԱՐԻ ՀԱՅ ՊԱՏՄԻՉՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՒՄ

A 33864

54772

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍՈՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1943

М. МКРЯН
ИДЕЯ ЗАЩИТЫ ОТЕЧЕСТВА И СОЗДАННЫЕ
ЕЮ ГЕРОИ У АРМЯНСКИХ ИСТОРИКОВ
ПЯТОГО ВЕКА
(На армянском яз.)

Издание Ереванского Госуд. Университета
им. В. М. Молотова

Գ. օ 0128, պատվեր 741, տիր. 300. Ստորագրվել է սովելու 5/1 1948թ.
ՀԱՍՈՒ ԺՈՂՈՎՐԴՈՒԹՅՈՒՆ ԿԻՑ ՔԵՐԹԵՐԻ և ամսագրերի տղարան, Երևան

Մ. ՄԿՐՅԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՈԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՈՒ ՆՐԱ ԾՆԱԾ
ՀԵՐՈՍՆԵՐԸ Ե-ՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ՊԱՏՄԻՉՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՒՄ

Հինգերորդ դարում հայ զրականության սկզբնավորումը և ժամափոր կյանքի ուժգին վերելքը արդյունք էր հենց հայրենիքի պաշտպանության մեծ գաղափարի:

Երկրի համար ծանր փորձությունների այդ ժամանակաշրջանում հայրենիքի պաշտպանության գաղափարը ուժիղ կերպով համակել էր ողջ ժողովրդին: Անհրաժեշտ էր հականարկած տալ Հայաստանի անկախության ոչնչացմանը ձգտող Սասանյան բանակալների ստոնձգություններին: Վոամշապուհ թագավորը, Մեսրոպ Մաշտոցը և շատ ուրիշ պետական-քաղաքական գործիչներ շատ լավ հասկանում էին, որ այն ժամանակ քրիստոնեական կրոնը կարևոր նախադրյալ էր ժողովրդին համախմբելու և դիմագրության ոգին բարձր պահելու համար, մի բան, որ հասկանում էին նաև Սասանյանները, ուստի ամեն մի հնար գործադրում էին, որ գուրսմղին այդ կրոնը և հայերին զրադաշտական դարձնեն:

Բայց հայ եկեղեցիներում ժամասացությունը ասորերին կամ հունարեն լեզուներով էր կատարվում. կրօնական զրքերը նմանապես այդ լեզուներով էին, որոնք անմատչելի էին նույնիսկ աղնվականների մեծամասնության համար: Քրիստոնեական կրոնը, ինչպես հարկն էր, գեռ չէր արմատավորվել իսկ որոշ շրջաններում նույն իսկ շարունակում էին հինգ հեթանոսական աստվածներին պաշտել: Պետք էր անմիջապես եռանդուն միջոցների գիմել հայերեն լեզվով զրականություն, ի հարկե, առաջին հերթին կրոնական զրականություն ստեղծելու համար: Պատմական այդ մեծ խնդիրը հայ պետությունը կարողացավ իրագործել: Վահրիմի կրած անհաջողությունից հետո թագավորի խընդիրքով հայերեն տառեր և զրականություն ստեղծելու դժվարին

աշխատանքները իր վրա է վերցնում ժամանակի մեծագույն գիտական և հասարակական գործիչ Մեսրոպ Մաշտոցը և հաջո՛ զությամբ ավարտում:

Հայերին գրականությունը հայրենիքի պաշտպանության համար ահազին նշանակություն ունեցավ. այն մի վճռական և ուժգին հարված էր Սասանյան թագավորների զավթողական ծրագրերին, քանի որ հայ ժողովրդի գաղափարական համախըմբական հզոր զենք հանգիստացավ. իսկ այդ զենքի ամենաազդեցիկ ակսակը մեր պատմիչ գրողների աշխատություններն էին:

Տ-րդ գարի հայ պատմիչ-գրողներն իրենց ժամանակաշրջանի համաշխարհային գրականության ու կուլտուրայի ամենաականություն ներկայացնուցիչներից էին. Նրանք հին հունական անտիկ պատմագրության լավագույն տրագիցիանները պահպանեցին և նոր որակի հասցըրին, և այդ այն ժամանակ, երբ Եվրոպայում գրանք խստորեն մերժվում էին: Տ-րդ գարի պատմիչները մեր մյուս գրողներից առավել ցայտուն և խորը արաահայտիչներն են հայրենիքի պաշտպանության մեծ գաղափարի: Նրանք ջերմ հայրենասերներ են և ժողովրդի ազատության ու անկախության նախանձախնդիրներ. Նրանց խորթ է ֆեոլաղական աշխարհայացքի նեղությունն ու սահմանափակությունը:

Հայ առաջին պատմիչ Ազաթանգեղոսը իր «Հայոց պատմության» մեջ նկարագրում է Տրդատ Երրորդի թագավորության շրջանը և հայերի գարձը՝ քրիստոնեությունն ընդունելը: Երկրի պաշտպանությունն այն ժամանակ, ինչոքս տեսանք, պահանջում էր, որ քրիստոնեությունն ավելի արժատավորվի. զրա համար պետք էր նաև այդ կրօնի նեղինակությունը բարձրացնել, իսկ այդ կարողացավ անել հենց Ազաթանգեղոսը: Նա իրեւ իրական պատմության ներկայացրեց Գրիգոր Լուսավորչի լեզենը և հայերի գարձը կատեց աստվածային հրաշքների հետ: Այդ բոլորը միջնադարյան մարդու մտածողության վրա կարող էին անշուշտ մեծ տպագորություն թունել: Այնուհետև, Ազաթանգեղոսը էպիկական զրույցներն օպտագործելով, Տրդատի հսկայական ուժը և նրա քաջագործություններն է նկարագրում, հատկապես զովելով նրան պաշտպանական նպատակով Սասանյանների զեմ մզած հաղթական կոփիների համար.

«Իսկ թագավորն Տրդատ զամենայն ժամանակս իւրոյ թագաւորութեանն աւերէր քանդէր զերկիրն. Պարսից թագաւորութեան և զաշխարհն Ասորեստանի աւերէր և հար-

կանէք ի հարուածս՝ անհնարինս։ Վասն այսորիկ պաշտամ-ձեցան բանքս այս ի բանս կարգի առակաց, թէ «իբրև զսէդն Տրդատ, որ սիզալովն աւերեաց զթումըս զետոց, և ցամաքեցոյց իսկ ի սիզալն յաւրում զնորձանա ծովուց»։ Վասն զի սէդ իսկ էք առ հանդերձս և այլ ուժով պնդու-թեան, հաստութեամբ, բուռն ոսկերոք և յաղթ մարմնով, քաջ և պատերազմող անհնարին, բարձր և լայն հասակաւ, որ գամենայն ժամանակս կենաց իւրոց պատերազմեալ և տանէք մարտիցն յաղթութիւն»^{*)}։

Իսկապես, Ագթանգեղոսը միայն սկիզբ է դնում հայ ժո-դովիրդի պատմությունից վերցրած անցքերի նկարագրով հայրե-նիքի պաշտպանության գաղափարն արծարծելուն։ Այդ տեսա-կետից կլասիկ ամբողջական գործեր ստեղծեցին նրա հետնորդ-ները։

Հայրենիքի պաշտպանության գաղափարն ավելի վառ ար-տահայտություն է գտել Փալստոս Բյուզանդի «Հայոց պատմու-թյան» մէջ։ Սա Ագթանգեղոսի թողած տեղից շարունակելով հայ ժողովրդի պատմությունը՝ հասցնում է մինչև 4-րդ դարու վերջերը, մինչև 337 թիվը, երբ Հայաստանն իրենց մեջ բաժա-նեցին և իրենց գերիշխանության տակ առան Բյուզանդիան ու Պարսկաստանը։ Փալստոսի նկարագրած ժամանակաշրջանը լի է հերոսական անցքերով, հայ զորքի և զորավարների գործած ուժե-րագործություններով։ Դա մի շրջան էք, երբ հայ ժողովությը լարել էր իր բոլոր ուժերը ազատությունը և անկախությունը պահպանելու համար։ Այն ժամանակիվ թագավորները՝ հայ Ար-շակունիները հետևողական քաղաքականություն էին սանում պետական իշխանությունը կենարոնացնելու իմաստով, որն ան-շուշտ ողբողքեախիվ նշանակություն ուներ և կարող էր մեծ ար-ժեք ունենալ երկիրն օտարերկրյա զավթիչներից պաշտպանելու

*) Իսկ թագավոր Տրդատը, իր թագավորության ամբողջ ժամանակա-շրջանում ավերում ու քանդում էք պարսկց Բագավորության երկիրն ու Ասո-րեստանը, ավերում էք և հսկայական հարվածներ էք հասցնում նբանց։ Մը համար առացգածք դարձած այն խորքերը շատ հալմար են դավան նրան, թէ քինչպիս սեդ Տրդատը, որ սիզալով ամերեց զետերի թմբերը և իր սիզալու ժամանակ ցամաքայրեց ծովերի հորձանքները։ Որպինետև սեդ էք հան-դերձանքների մէջ, այլև ուժգնությամբ, ամրությամբ, ուժով, ամուր ու-կորներով, հաղթ մարմնով, քաջ էք և մեծ պատերազմող, հասակով բարձը էք և լայն։ իր ամբողջ կյանքը ընթացքում պատերազմելով, միշտ մարտերից հաղթող էք գուրս եկած» (1914 թ. հաստ., էջ 71)։

գործում: Բայց այդ քաղաքականությունը ներքուստ ուժից զի՞մաղբության հանդիպեց աշխարհիկ և հոգեսր ֆեոդալների որոշ մասի կողմից, որը ճարպիկ կերպով օգտագործում էին արտաքին թշնամիները: Երբ Սասանյանները կամ Բյուզանդական կայսը ները հարձակվում էին Հայաստանի վրա, սովորաբար նրանց դրժակցում էր թագավորից ապատամբած այս կամ այն իշխանը, երբեմն էլ միքանիսը միացած: Արշակունիները չկարողացան մինչև վերջ զապել և ոչչացնել ներքին կինաբոնախույս ուժերը, այլ իբրև զրկվեցին իշխանությունից, դա ինարկի հնաւեանք էր աչ թե նրանց քաղաքականության անճառության, այլ այն բանի, որ այդ ուժերը միշտ օժանդակություն էին ստանում հարեան գորեղ պետություններից, որոնց անընդհափ ներխուժումները և հարվածները հանդիսաւ ու զագալ չէին տալիս հայերին:

Փաստու Բյուզանդը խոշոր հայրենասեր է, ուստի նա իր «Պատմության» մեջ մեծ տեղ է հատկացնում հատկապես Մամիկոնյան իշխաններին, որոնք ընդհանրապես համարձակցում էին Արշակունիներին և որոնք հայ զորքի ժառանգական սպարապետները լինելով, մեծ գեր էին կատարում թե ներքին և թե արտաքին թշնամիների դեմ պայքարելու գործում: Փափստուի համար սիրելի են Մամիկոնյանները և նա համաձայն է նրանց գործունեության հետ: Նրա «Պատմության» մեջ շտա են այնպիսի դրվագներ, որոնք բնորոշ կերպով արտացործում են հայրենիքի պաշտպանության համար մղված պայքարը և այդ պայքարում Մամիկոնյանների կատարած գերը: Ահա զրանցից միքանիսը:

Խորավ Կոտակ թագավորը, երբ զբաղված էր մայրի ծառ-սերի հաշակավոր անտառը տնկելու զործով, լուր է ստանում, որ պարսիկները մեծ պատրաստությամբ մտել են Հերեանդ գավառը, Թագավորը Բգնունյաց նահապետ Դատարեին, մի զորացին հանձննելով ուղարկում է թշնամուն զիմազրավելու՝ մինչև զլիսավոր ուժերի ռազմի պատրաստվելը: Սակայն Դատարեն գավաճնում է և անցնում պարսիկների կողմը: Այնուհետև, երբ հայերը սպարապետ Վաչե Մամիկոնյանի զիսավորությամբ ջարդում են ներխուժածներին, բռնում են Դատարեին, ըերում են թագավորի առաջ և քարկոծելով սպանում: Իսկ ինը Վաչեն նավ նստելով մտնում է Աղթամար կղզին և անձամբ ոչչացնում է Դատարեի ամբողջ ցեղը:

Արշակ թագավորն իմանում է, որ Մամիկոնյան առհմի-

տանուտեր վարդանը ողետության նկատմամբ դավագրական կապերի մեջ է մտել Սասանյան Շապուհ թագավորի հետ: Վարդանին վերացնելու գործը հանձն է առնում նրա եղբայր սպարապետ Վասակը: Սա փոքրաթիվ ուղեկիցներով գնում է Տայք Երախանի բերզը, որտեղ ասլում էր Վարդանը: Վերջինս ոչինչ չկասկածելով՝ նրանց ընդունում է իրեն հյուրերի: և այն ժամանակ երր բերդի տակ գտնվող ձորակում հոսող գետակի ափին վարդանն իր զբուխն էր լվանում, Վասակի մարդիկ շորերի տակին թագրած զենքերը հանելով՝ սպանում են նրան:

Արշակի որդին՝ Պապը տեղեկանում է, թե ինչպես Շապուհի կողմն անցած Հայը Մարդպետը գաղտնի մտել է պաշարված Արտագերս լեռը և վիրավորական խոսքեր ասել այնտեղ գտնվող Փառանձմեն թագուհուն՝ իր մորը: Պապը հրամայում է սպարապետ Մուշեղ Մամիկոնյանին չարամահ անել նրան: Զմեռը Հայը Մարդպետը դուրս է զալիս շրջագայելու Տարոնում գտնվող իր կալվածքները, Մուշեղը նրան հրավիրում է նույն վայրում գտնվող իր Ողական ամրոցը խնջույքի: Երբ Մարդպետը մտնում է Ողական, Մուշեղի հրամանով զորականները բռնում են նրան, բայց ովհին մերկացնում և ձեռքերը ծնկների տակ կաղելով տանում դնում են սառած Եփրատի վրա: Այնտեղ ցրտից մենում է Մարդպետը:

Ահա թե ինչպիսի վճռականությամբ ու խստությամբ Մամիկոնյան սպարապետանները և Արշակունիները ոչնչացնում էին հայրենիքի զավաճաններին, բայց առավել աչքի են ընկնում նրանք արտաքին թշնամիների գեմ պայքարելու գործում: Հարդ դարսում բյուզանդական կայսրության և Սասանյան Պարսկաստանի գեմ մզած անընդհատ կոփիներում աչքի են ընկնում Մամիկոնյաններից Վասակը և նրա որդին Մուշեղը, իսկ Արշակունիներից՝ Արշակ Հարդ և նրա որդին՝ Պապը, որսնք Հայտաստանի լիակատար անկախությանն էին ձգտում և դրա համար օրհասական պայքարի մեջ էին մտել հարեւան երկու տերությունների զեմ:

Փակտոսուը ատելությամբ լցված լինելով հայրենիքի ազատության վրա ձեռք բարձրացնողների նկատմամբ, սիրով և գեղեցիկ մանրամասնություններով գեղքերի մեջ գծագրում է նրանց հակառակած տվողների հերոսական կերպարները: Վերցնենք մի քանի այդպիսի գեղքեր: Շատուհը պատերազմ է հայտարարում Բյուզանդական կայսրության և Արշակին հրավիրում է հայկական

զորքալ մասնակցել հարձակման: Արշակը Շապուհից շուտ է հառնում ճակատամարտի վայրը և նրա գալստյան չսպասելով հարձակվում է բյուզանդական բանակի առաջապահ զորամասերի վրա ու հետ շպրտում: Եթե Շապուհն իր բանակով տեղ է հասնում, երեսանց շնորհակալություն է հայտնում կատարվածի համար, բայց զավադրաբար ուզում է բանել Արշակին: Սա իմասնալով Շապուհի մտազրությունը՝ ամեն ինչ թողնելով, Վասակի հետ ծածուկ փախչում է Հայաստան և իրեն միանգամայն անկախ հայտարարում: Շապուհը Բյուզանդացիներին պարտության մատնելուց հետո, որոշում է զատաստան տեսնել Արշակի հետ: Հայերը մնում են մենմենակ Սասանյան Պարսկաստանի գեմ և հերոսաբար դիմագրում են Շապուհի ուզարկած բանակների հարձակումներին: Թե ինչպիսի առելություն էին տածում հայերը գեղի բռնակալը և ինչպիսի ցասումով էին կովում նրա զեմ, երեւմ է օրինակ՝ հետեւյալ գեղքից:

Մի անգամ Շապուհը ժողովելով «զզօրս իւր անթիվ և անհամար իրեկ զավազ առ ափն ծովու և փիզս բազում» երեք բանակի բաժանելով՝ երեք առբրեր տեղից միաժամանակ խռուժում է Հայաստան: Այդ բանակներից մեկի գեմ կովող հայկական զորքի հրամանատարն էր սպարապետ Վասակի եղբայր Բագոսը՝ «որ ի զործ արութեան քաջ էր անհնարին»: Սա ջաբգելով թշնամու հետեւակը գեմ է գուրս զալիս նրա փղերի գնդերին, այդտեղ նրան երեսում է արքունական նշաններ կրող և շքեղ զարդարված մի փիզ: Բազոսը կարծում է, որ թագավորը գտնվում է այդ փիզի վրա, ուստի սուրը մերկացրած, իջնում է ձիուց և հետիուն հարձակվելով՝ մտնում է փիզի տակ ու սրով հարվածում նրա փորին: Վիթխարի կենդանին ընկնում է և իր ծանրությամբ ճգնում հերոսին, որն արդար վրիժառության ծառավից ինքնամոռացություն մեջ ընկած չի կարողանում ժամանակին հեռանալ:

Հստ փավստոսի, Շապուհն ավելի քան քսաներեք անշամ տարբեր զորավարների հրամանատարությամբ հարյուր հազարներով բանակներ է ուզարկում Հայաստանը նվաճելու, որոնց, սակայն, Վասակը միշտ կոտորում ու հետ է շպրտում: Ահա այդ անվերջ կորիվներից միքանիսի սեղմ նկարագրերը:

«Եկն էհաս Հազարաւուխո՞ի զօրացն Պարսից, զալ այրեացւեր առնել՝ի հիմանց տապալել զերկիրն հայոց: Եւ դիմեալ ընդ երկիրն Աղձնեաց, կամեցավ ծաւալել ընդ եր-

կիրն հայոց և ընդ ամենայն սահմանս նոցա: Ապա ելանէր Վասակ ընդ առաջ նորա հանդերձ մետասան հաղարաւ. հարկանէր սատակէր, և զօրսն զմնացեալսն և զիախստական արկանէր յերկիրն Պարսից, և զհազարաւութան անդէն սպանանէր»*):

«Յետ այսորիկ Բոյեկան մեծ նախարար Պարսից, և քառասուն բեր ընդ նմա, գային հասնէին յՍտրպատական. կամէին սապատակ առնել երկիրն Հայոց: Ապա զառաջեօք անդանէր Վասակ իւրով Հայաստան գնդաւն, հարկանէր զզօրսն ամենայն Պարսից, և զիոյեկանն սպանանէր ի Թաւրէժն: Եւ այրէր անդ զապարանս թագաւորին Պարսից. և գաեալ անդ զպատկեր թագավորին Պարսից, նետաձիդ եղեալ նետալից առնէր: Բայց միայն փախչէր Մերուժանն ընդ նոսս եկեալ»**):

«Զինդկապեա ոմն, զօրագլուխ զօրացն թագաւորին, հանդերձ իննոսուն բիւրուն զայր հասանէր ի սահմանս Ատրպատականի: Ապա կանխէր և ելանէր ընդ առաջ նոցա Վասակ զօրաւարն հայոց, անկանէր ի գիշերի ի վերա զակշին պարսկաց և հանէր ընդ սուր առ հասարակ զամենեսեան, և սպանանէր զզնդկապեան ՚ի մէջ բանակին: Բայց միայն ճողովրեալ ապրեր Մերուժանն վատանշան»***):

*): «Հայոց երկիրը հիմնիվեր անելու, այրելու և տաղակելու և համար եկամ հասավ Պարսից դորքերից Հազարավուխտը եվ առաջ շարժվելով դեպի Աղջնեաց երկիրը, կամեցավ տարածվել Հայաստանում: Սակայն Կառավար տա նըմեկ հաղար գործ և Նրա գեմ դուրս գալով, հարգածեց, շախջախեց նրան ու գործի մացորդներ և փախցրեց Պարսկաստան և այնտեղ սպանեց Հազարավուխտն: (1889 թ. հրատ., էջ 151):

**): «Մըրանից հետո Պարսից մեծ նախարար Բոյեկան չորս հարյուր հազար զորքով, զալով հասնելով Ատրպատական, կամենում էր ասպատակել Հայոց երկիրը, Բայց Վասակը յուր հայկական գնդով դեմ գուրս գալով նրան, հարգածեց պարսկական ամբողջ զորքին և Թավրեժում սպանեց Բոյեկանին այնտեղ այրեց պարսից թագավորի ապարատները և դանելով պարսից թագավորի պատկերը, նշանակեալ դարձրեց այն և նետերով խոցեց Նրանց հետ եկած Մերուժանը միայն փախավ» (էջ 157):

***): Պարսից թագավորի զորքերի զօրավարներից մեկը, իշնոսուն բյուր զորքով զալիս հասնում է Ատրպատականի սահմանները: Բայց հայոց զորքերի զօրավար Վասակը, իմանալով այդ, նրանց ընդառաջ գնաց, գիշերին հարձակվեց պարսից բանակի վրա և առհասարակ բոլորին սրի քաշելով, բանակի մեջ սպանեց զորավարին: Միայն վատանշան Մերուժանը ճողովրելով, աղատվեց» (էջ 159):

Պատերազմների նույնիսկ այս կարճ նկարագրությունների մեջ պարզ նկատվում է սպարապետ Վասակի ռազմական մեծ հմտությունը, վճռականությունը և արագաշարժությունը, հայրենիքի պաշտպանության գաղափարից ծնած նրա հերոսականությունը: Ինչպես երևում է դեպքերից, նա հաճախ կանխել է թշշնամուն և նրան ջարդել է իր իսկ տերիտորիայում:

Կոմիների այս անընդհատ հորձանքի մեջ, իհարկե, կա որոշ չափազանցություն, ի հարկե, շատ բան պատմիչը վերցրել է ժողովրդական էպոսից: Բայց նրա մեջ կա նաև խորը ներքին ձըշմարտություն՝ դա այն է, որ իսկապես հայ ժողովուրդը մեծ համառությամբ ու կամքի լարումով է պաշտպանել իր հայրենիքն ու պատությունը:

Շապուհը վերջ ի վերջո հաջողեցնում է Արշակին և Վասակին բերել Պարսկաստան, իր թի հաշտության բանակցություններ վարելու համար, բայց զրգելով իր երդումը՝ Արշակին բանտարկել է տալիս Անհուշ բերգում, իսկ իրեն այնքան տարիներ ահ ու սարսափի մեջ պահող հերոսին՝ Վասակին, հրամայում է մորթաղերծ անել: Այս զաժան եղենագործությամբ, ի հարկե պայքարը չի վերջանում, և երբ թագավորում է Արշակի որդի Պապը, այն բորբոքվում է մի նոր թափով:

Պապի օրով երկրի ներքին միասնությունն ուժեղացնելու ու պահպանելու և արտաքին թշնամիների գեմ կովելու գործում մեծ գեր է կատարում Վասակի որդին՝ Մուշեղը: Ուստի սրա մասին ևս Փալստոսը խոսում է մեծ սիրով և միանգամայն նիշտ ու գեղեցիկ գնահատական տալիս նրա գործունեությանը. «Այլ քաջն զօրավարն սպարապետն հայոց... միամտությամբ և արդար վաստակով ջանայր հանապազ և վաստակէր ի վերայ թագաւորությանն հայոց աշխարհին: Զտիվ և զգիշեր կայր յաշխատութեանն. ջանայր և ճգներ կալ ի ճակատու պատերազմին և ոչ թողոյր բնաւ ամենենին և ոչ քան զկորի մի գետին ի սահմանաց երկրին հայոց ուրեք վտարել» *):

Մի անգամ Մուշեղը Շապուհին մեծ ջարդ է տալիս է դերի վերցնում նրա կանանցն ու մեծամեծներից շատերին: Կանանցը նա հետո վեհանձնաբար հետ է ուղարկում, բայց հոր

*.) «Քաջ զորավարն ու հայոց սպարապետը... միամտությամբ ու արդար վաստակով միշտ ջանում էր և աշխատանք թափում հայոց աշխարհի թագավորության համար: Գիշեր ցերեկ չարչարգում էր, ճիզ ու ջանք էր թափում պատերազմի ճակատում լինելու և երբեք չէր թողնում, որ մի կտոր հող հայոց սահմաներից խլին» (էջ 228):

մահվան վրեժը լուծելու համար հրամայում է բռնված մեծամեծներից վեց հարլուր հոգու մորթազերծ անել:

5-րդ դարում՝ Սասանյան Պարսկաստանի կողմից Հայաստանի վրա գործադրած նոր ճնշման առկայության պայմաններում, Փալստան իրբեք հայրենասեր, բնականարար պետք է վեր հաներ հենց Սասանյանների զավթողական ձգտումների գեմ մղած պայքարի հերոսական դրվագները, մի բան, որ փայլուն կերպով հաջողվել է նրան:

427 թվին Հայաստանը առժամանակ կորցրեց պետական անկախությունը. բայց ժողովրդի մեջ պահպանվում է այն նորից ձևոք բերելու կամքն ու հավատը: Հայ մեծագույն պատմիչ Մովսես Խորենացին իր աշխարհանոչակ գրքով գալիս էր հայ ժողովրդի ազատասիրական ողուն մեծ սնունդ տալու, հայրենասիրական զգացմունքները վատելու և բորբոքելու: Եթե նկատի ունենանք, որ Խորենացին իր «Հայոց պատմությունը» գրել է 451 թվի ժողովրդական ազատազրական շարժումից հետո և 481 թվի ազատազրական նոր շարժման նախօրյակին, ապա մեզ համար պարզ կլինի, այն հասարակական-քաղաքական հսկայական նշանակությունը, որ իր ժամանակին և հետո կարող էր ունենալ այդ գիրքը և ունեցավ:

Խորենացու Հայոց պատմությունը հայ հին կյանքի էնցիկլոպեդիան է: Հենց միայն այն, թե ինչքան բան է նա փրկել անդառնալի կորսությունը, բավական էր, որ հետագա սերունդները մեծ երախտազիտությամբ հիշելին նրա անունը: Բայց Խորենացու մեծությունը և արժեքը, իրրե գիտնականի, պայմանավորվում է նաև նրա գործի բարձր գաղափարականությամբ՝ հայրենիքի պաշտպանության մեծ գաղափարով հազեցված լինելով: Այդ գաղափարականության փայլուն արտահայտությունն է նախ և առաջ այն, որ նա հնում առաջինը հանգիսացավ, որ հարկ համարեց գրել ոչ միայն իր ժամանակի անցքերի, կամ առանձին վեցքած որոշ էպոփայի պատմությունը, այլ սիստեմատիկ կերպով շարադրեց հայ ժողովրդի անցյալի ամրող պատմությունը, սկսելով նրա ծագումից:

Այդ հոյակապ ծրագրի մտանացման գործում անկասկած խոշոր դեր է կատարել նաև ժամանակի հայտնի քաղաքական-պազմական գործիչ Սահակ Բաղրատունին, որը շատ բազմակողմանի զարգացած և կրթված մի աճնավորություն էր: Խորենացին իր «Պատմության» մեջ անկեղծ հիացմունքով է խոսում:

նրա մասին, որովհետև նրանից հանձնաբարություն է ստացել գրելու հայոց պատմությունը. «Առ որով տեսանհմ և զայս, ով եթէ որք առաջ քան զմեղ և կամ առ մեօք եղեն հարուստք և իշխանք աշխարհիս Հայոց, ոչ ընդ ձեռամբ անկելոց իւրիանց արդեօք գտելոց իմաստնոց զայսպիսեաց հրամայեցին կարգել զիշխատակ բանից, և ոչ արտաքուստ ուստեօք այսոցիկ ի ներքու ածել խորհեցան օժանդակութիւնս իմաստից, և զքեզ այժմ այսպիսի եղեալ ծանեաք,—ապա ուրիմն յայտ է, թէ ամենեցուն քան զքեզ նախագունիցս ճանաչիս վեհագույն, և բարձրագուն սից արժանաւոր գովութեանց և յայսպիսիս պատկանաւոր զնել յարձանագրութիւնս բանից» *):

Խորենացին անչափ ուրախ է իրեն արված այսպիսի հանձնաբարությունից, որովհետև գա զուգագիպել էր իր ունեցած մտադրություններին: Գովելով Սահակ Բագրատունուն, նա անխընա քննադատության է ենթարկում անցյալի հայ թագավորներին և իշխաններին, որոնք ժամանակին հոգ չէին տարել հայ ժողովրդի պատմությունը գրել տալու, մի բան, որի անհրաժեշտությունը պատմիչը միանդամայն իրավացիորեն և գեղեցիկ կերպով պատճառաբանում է այսպիս: «Զի թեպետև եմք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքրու սահմանեալ և զօրութեամբ տկար և ընդ այլով յոլով անզամ նուածեալ թագավորութեամբ, սակայն բարում զործք արութեան զանին գործեալ և ի մերու աշխարհիս, և արժանի գրոց յիշատակի զոր և ոչ մի ոք ի նոցանէ պէտ յանձին կալաւ մատենագրել» **):

Եվ այսպես ահա Խորենացին իր հանձնարեկ մատյանում զրի է առնում մեր աշխարհում տեղի ունեցած բաղմաթիվ քաջության գործեր, որպեսպի զատիքի արագարակի և սովորեցնի, որպեսդի:

*) «Արա հետ միասին հետեալն էլ եմ նկատում, որ, եթե մեզանից առաջ և մեր ժամանակ ապրող հայոց աշխարհի ցեղագետներն ու իշխանները ոչ իրենց ձեռքի տակ ընկած և հավանորեն եղած իմաստուններին հրամայեցին այսպիսի պատմական հիշատակարաններ գրել, ոչ էլ մտածեցին գրոից որեւէ տեղից ներս ըերել իմաստության նպաստներ, և այժմ քեզ ենք տեսնում այսպիսի մարդ, ուրեմն պարզ է, որ դու պետք է ճանաչվես բայոց քեզանից առաջ եղածներից վեհագույն և բարձրագույն գովոստների արժանավոր և պատմական այսպիսի արձանագրության մեջ զրվելու արժանիւ (Էջ 6, 1912 թ. հրատ.):

**) «Որովհետև թեպետ մենք փոքր ածու ենք և շատ սահմանափակ թվով և շատ անզամ օտար թագավորության տակ նվաճված, բայց և այնպես մեր աշխարհում էլ քաջության շատ գործեր կան զործքած գրելու և հիշատակելու արժանի, որ նրանցից ոչ ոք հոգ չտարավ գրի առնելու» (Էջ 10):

ոգեսրի և ազատության համար նոր պայքարի հանի հայ ժողովը ինքնին:

Զափազանց բնորոշ է, որ Խորենացին իր պատմությունը վերջացնում է Հայաստանից Արշակունիների թագավորության վերացման փաստով, և այդ առթիվ գրում է իր հոչակավոր ողբը: Մահից առաջ անարդությամբ գահից զրկված հայ վերջին Արշակունի թագավոր Արտաշեսին Խորենացին թեպետ քննադատում է անրարոյական լրաբի համար, բայց գառնակսկիծ ողբում է նրա անկումը, եւնելով այն տեսակետից, որ հայերի համար ավելի լավ էր ունենալ մի այդպիսի վաստ թագավոր, քան թե բոլորովին զրկվելով անկախությունից՝ ընկնել օտար կառավարողների լծի տակ:

Հայ ժողովրդի ազատության և երկրի պաշտպանության գործարքից մզգաձ Խորենացին իր զբանում աշխատում է վեր հանել այն թագավորներին և նրանց ժամանակաշրջանի անցքերը, երբ ժողովուրդը վայելել է պայքարով ձեռք բերված ազատության պատուղները: Այսպես, նա մեծ տեղ է հատկացնում, իր պատմական անձնավորություններ ներկայացնելով, ժողովրդական էուսից և առասպելներից վերցրած անձնավորություններին: Ահա խայտակն ու հաստաբազուկ գյուցաղն Հայկը, որ երեքթեյան նետով կործանում է Տիտանյան Բելին, ահա Արամը, որ զերի է բռնում հայրենիքի սահմանները ձիերի ոտքի տակ տրորող մեղացի նյուքար Մագեսին և բերելով Արմավիր հրամայում է երկաթե ցից խփել ճակատին և կախել աշտարակի ծայրից, որպեսզի բոլոր անցորդները տեսնեն: Արտմի մասին պատմիչը ափելացնում է, թե աշխատասեր և հայրենասեր մարդ լինելով՝ ափելի լավ էր համարում հայրենիքի համար մեռնել քան թե տեսնել, թե ինչպիս օտարները ոտի տակ էին կոխում հայրենի սահմանները և օտար մարդիկ տիրում էին իր արյունի հարավատաներին:

Հապա ինչպիսի հիացմունքով է նկարագրում նա կիսապատմական թիկնավետ, մեղվական Երվանդյան Տիգրանին: Սա սպանում է Վիշապ Աժդանակին, բարձրացնում է երկրի ուղղմական հզորությունը և խաղաղություն ու բարեկեցիկ վիճակ է ըստեղծում ժողովրդի համար, խաղաղություն և շենություն բերող Տիգրանը յուղով և մեղրով լիացրեց բոլորին՝ գրում է Խորենացին: Թե ինքը և թե նրա ժամանակը, շարունակում է նա, ժամանակակիցների համար նախանձելի էր, իսկ հետնորդներին

համար ցանկալի. և ինչպես ինձ համար, ասում է, սիրելի է Տիգրան Առաջինի գործերի մասին ճշմարտապես պատմելը, այնպես էլ ընթերցողի համար պետք է սիրելի վիճի երգանդյան Տիգրանի պատմությունը, որովհետև ինչ մարդն ու նրա գործերն են, այն էլ նրա պատմությունն է, ուստի սիրում եմ ըստ քաջության այսպես կոչել—Հայկ, Արամ, Տիգրան: Եվ քերթողահայրը լիրիկական շեղում կատարելով—բացականչում է երանին նրանց օրով ծնված լինել և նրանց տեսությամբ ուրախանայի:

Խորենացին հաճույքով է պատմում նույնիսկ այն գեղքերում, երբ թագավորողը հակակրելի է և գահը հափշտակել է ուրիշից, բայց զբաղվել է երկրի շինարարությամբ: Այսպիս նա հիացմունքով նկարագրում է ժանատեսիլ երգանդ թագավորի շինել աված գաստակերտ երգանդակերտը: Մեծ հովիտը, — ասում է նա, — լցրեց մարդկանցով և հոյակալ շինություններով, որոնք փայլում էին աչքի բիբի նման, ապա մարդկանց ընակության շուրջը շինեց ծաղկոցներ և բուրաստաններ, ինչպես որ բիբի շուրջը աչքի բոլորակն է, իսկ շրջապատի բազմաթիվ այգիները կարծես թե կոպերի խիտ և գեղեցիկ գիծը լինեին: Խորենացին, առհասարակ ոչ մի առիթ բաց չի թողնում ժողովրդի համար ստեղծված լավ ժամանակները հիշատակելուց, որոնց, իր զարմանալի սեղմ գրիմած գրքում, բավական շատ էջեր է հատկացը նում: Օրինակ, նա մանրամասն կանգ է առնում նաև Արտաշեսի թագավորության շրջանի վրա, առատորեն օգտագործելով էպոսի տված նյութերը. որովհետեւ, — գրում է Խորենացին, — որա օրով, ասում են, երկրի շեն լինելու պատճառով հայերի աշխարհում ոչ սարերում, ոչ գաշտերում չմշակված գետին չէր զանցվում:

Խորենացին հայրենիքի պաշտպանության հերոսների և նըրանց արարքների մասին պատմելիս, նրանց նկատմամբ իր սերն ու համակրանքը արտահայտում է գեղեցիկ էպիտեաներով ու համեմատություններ անելով և Բյուզանդի նման նկարագըրական պլաստիկ ու ռելիֆ պատկերներ տալով: Օրինակ, Արտաշեսի գորքերի հրամանատար՝ հռոմեական լեզվոները խորտակող Սմբատ Բագրատունու մասին գրում է, որ նա ուներ իր քաջության համեմատ հասակ և իր առաջինությամբ որսում էր հոգիներ նա վայելչացած էր գեղեցիկ ալեոր մազերով և աչքերի մեջ ուներ արյան փոքրիկ նշան, որը փայլում էր, ինչպես զբակոնատիկոնը ոսկու և մարդարիտ մեջ: Մի ուրիշ օրինակ, Տեր-

դատը իր մղած կոխվներից մեկում, թշնամու բանակը ձեղքելով հսկայի նման առաջ է վազում: Զեմ կարող,—գրում է Խորենացին,—նկարագրել նրա ձեռքի արագությունը, թե ինչպես անհամար մարդիկ նրանից զարկվում թագվալվում, զետին էին ընկնում, ինչպես հմուտ ձկնորսի ձկներով լիքը ցանցից ձկները գետին են թափվում ու վիսառմ հողի երեսին: Ապա պատմում է, թե ինչպես այդ կովում Բասիլների թագավորը տեսնելով այդ, մոտենում է և իր կաշվով պատած ջղյա պարանով ուզում է բոնել Տրդատին, և երբ սա ձեռքը բարձրացրել էր մեկին խփելու, նա զցում է պարանը, որը հարմար ընկնում է ձախ ուսին և աջ թեփ տակը: Սակայն Բասիլների թագավորը չի կարողանում շարժել հսկային, ուստի պարանը զցում է իր ձիռ կրծքին և ուզում է մտրակել բայց մինչ այդ, Տրդատը ձեռքով բանելով պարանը մեծ ուժով թագավորին քաշում է գեղի իրեն և սրի մի հարցածով կտրում է նրան մեջքից, կտրելով նաև հեծած ձիռ զլուխը: Այսպիսի հերոսության շատ ուրիշ զեպքերի խանդական նկարագրություններ է տալիս Խորենացին իր գործում:

Խորենացուց հետո, ծրբ գարի մյուս հայ պատմիչների՝ Եղիշեի և Ղազար Փարպեցու գործերում ևս վաս արտահայտություն է գտել բոցաշունչ հայրենասիրությունը:

Ծանր օրեր էր ապրում հայ ժողովուրդը բյուզանդական նենդ ու գաման կայսրների և Սասանյան թագավորների լծի տակը, հարկերը և կեղեքումը անսասելի չափերի էին հասել. «Եարնավ ով իսկ կարէ պատմել»—գրում է Եղիշեն, —վասն ծանրության մտից և սակից, բաժից և հասից, լիբանց և դաշտաց և մայրեաց: Ոչ ըստ արքունի արժանավորութեանն առնուին, այլ հինարար յափշտակելով, մինչև ինքնանք իսկ մեծավես զարմանային՝ թէ ուստի այս ամենայն գանձ ելանէ՝ զիմքը շէն կայցէ աշխարհն Հայաստանեաց»*):

Սասանյան Հազկերստ II-ը բյուզանդացիների գեմ տարած հաղթանակեց խրախուսված, որոշում է հայերի ունեցած անկա-

*.) «Բայց ով կարող է պատմել թե ինչքան ծանր մուտքեր ու սակեր (հողեց կոմ շենքից առնված տուրքեր) բաժեր ու հասեր (բնքից առնված մասը) էին նշանակված լեռներից, դաշտերից, անտառներից: Առնում էին ոչ թե ինչպես վայել էր թագավորության, այլ ավաղակի սկես հափշտակելով: Մինչև իրանք իսկ սաստիկ զարմանաւմ էին, թե որտեղից է այսքան գանձը դուրս դալիս, ինչպես է շեն մնում Հայաստան աշխարհը» (էջ 32):

խոթյան վերջին մնացորդները ոչնչացնել. բանն այն է, որ Արշակունիների գահազրկուումից հետո, նախարարները դեռ պահում էին իրենց իշխանությունը և ունեին սեփական զորք պահելու իրավունք: Բացի զբանից հայերը քրիստոնյա լինելով հոգեոր, կուլտուրական կյանքով բոլորովին անկախ էին, իսկ դա արդեն այնպիսի փոթորիկների նախազրյալ էր, որ քուն ու գաղար չէր տալիս Սասանյաններին: Հազկերար և նրա հազարապետ Միհրներսեհը սկզբում՝ հարկային ամենազաժան քաղաքականությամբ, հետո՝ ուղղակի բոնության զենքի ուժով դավանափոխ անել փորձեցին հայերին, նրանց վերջնականապես իրենց ենթարկելու նպատակով: Բայց այդ ծրագիրը տապալվեց. հայ ժողովուրդը զենք վերցրեց և Վարդան Մամիկոնյանի դեկավարությամբ ազատազրական մեծ պայքարի ելավ: Այդ պայքարը իր «Պատմութիւն Վարդանանց» գրքում էպիկական հզոր չնչով, հորդաբուխ լիրիզմով, կրակոա լեզվով հավերժացրեց Ավարայրի բրուկը՝ Եղիշեն:

Եղիշեի զրվածքը ոչ միայն պատմական գեպերի մի փայլուն շարազրանք է, այլև որոշակի կերպով հետապնդում է ընթերցողին դաստիարակել հայրենասիրական ողով. սովորեցնել սիրել ազատության զործի համար պայքարող հերոսներին և տաել բոնակալներին ու գալաճաններին: Իր պատմության Յոթերորդ եղանակի վերջում, նկարագրելով գալաճան Վասակ Սյունեցու մահը՝ Եղիշեն հետեւյալ խոսքերով է ավարտում գիրքը. «Թրեցաւ յիշատակարանս այս վասն նորա, առ ի կշտամբումն յանդիմանութեան մեղաց նորա. զի ամենայն ոք, որ զայս լուեալ զիտասցէ, նղոսս ի հետ արկցէ, և մի լիցի ցանկացող զործոց նորա»*):

Այսպես, Եղիշեն ցանկանում է, որ իր ընթերցողները նզովին Վասակին և չհետեւեն նրա արարքների օրինակին: Այս նըսպատակին նա հասնում է ոչ միայն Վասակի զործունեությունը մերկացնելով, այլև շատ մանրամասն կերպով նկարագրելով ազատազրական պայքարը և այդ պայքարի հերոսական կերպարները վերհաննելով: Եղիշեի զործը իսկապես պատմություն լինելով միաժամանակ մի հոյակապ զյուցաղներգություն է: Այսուղ

*.) «Եյս հիշատակարանը գրվեց նրա համար, որ նրա մեղքերը հանգիւանվեն, նախատվեն, որպեսզի ամեն մարդ, ով լսե և իմանա այս, նզովք կարդա նրա հետեւց և ցանկացող շինի նրա զործերին» (Էջ 183):

խոշոր գիտնականի հետ միասեղ հանդես է զալիս և խոշոր ըստ տեղագործողը: Եղիշեն իր սիրած ժողովրդական պայքարի մարտիկների ու զեկավացների մասին պատմում է մեծ ողբորությամբ և ցանկանում է նույն ողբորությամբ վարակել նաև ընթերցողին, և վարակում է: Նա վառարանում է արդար գործի համար ուղղմի զաշտում՝ ընկածներին, իրեւ անմահների, և ցանկանում է, որ նրանք ընթերցողի հիշապության մէջ էլ անմահ մնան: Բոլոր նրանք, որոնք կովում են գիտակցաբար հանուն ձշմարտության ու առաջինության, մահից չեն վախենում, որովհետև նրանց մահը իրոք անմահություն է—այսպիս է խորհրդագածում Եղիշեն և հետո այդ հանճարեղ կերպով՝ ընդհանրացնում է մի ափորիզմում: «Մահ ոչ իմացեալ մտի է, մտի իմացեալ անմահութիւն է»:

A ^{II} 33864
4727

451 Թիի աղասազբական շարժման զեկավարն էր Վարդան Մամիկոնյանը, ընականաբար Եղիշեն իր պատմության մէջ պետք է մեծ տեղ հատկացներ նրան և աշխատեր ընթերցողին նախ և առաջ նրա օրինակով համակել հայրենասիրական ազնիվ զգացմունքով: Իրոք Վարդան Մամիկոնյանը հայ ժողովրդի պատմության շատ նշանավոր գեմքերից մեկն է հանդիսանում: ըստ Եղիշենի գծենք նրա գործունեության համառոտ պատկերը:

Հաղկերտ Ա-ը իր հազարապես խորամանկ ու գաժան ծերուկ Մի՞րներսենի խորհրդով, խիստ հրամանով իր մոտ է կանչում հայ, վրացի և աղվան բոլոր նշանավոր իշխաններին և կատաղած, հազար ու մի սպառնավիքով ստիպում է, որ ընդունեն զբարաշատական կրոնը: Խիստանների մեծ մասը միայն առերես կատարում են թագավորի ցանկությունը: Հաղկերտը ուրախացած՝ նրանց հետ զորք և ահազին թվով մոգեր դնելով, ետ է ուղարկում իրենց երկիրը: Մոգերը զեռ ճանապարհին իրենց մէջ վիճակ են զցում, թե ում որ շրջանը պետք ընկնի և ում որ մասը պետք է հասնի ծրագրված թալանից ու կողոպուտից:

Հայաստանի սահմանը մտած մոգերի և ուրացողների հետ առաջին ընդհարումը տեղի է ունենում Անգղ կոչված գյուղաքաղաքի մոտ: Այդտեղ մոգերը փորձում են եկեղեցիների գոները ջարգել բայց զինված հականարված են ստանում և ետ զառնում: Սյունիքի իշխան Վասակը, որ թաղավորի կողմից Հայաստանից մարզպան էր կարգված, խորամանկությամբ կարողանում է առժամանակ տեղացիների հուզված մտքերը խաղ-

դացնել և հետո մողերին խումբ-խումբ ցրել Հայաստանի զանազան վայրեր, որպեսզի զՄադաշտականությունն քարողեն:

Այս բոլոր գեղարքերին ականատես էր Վարդանը, որոնց չեհանդուրժելով՝ նա առժամանակ գաղտնի պատրաստություններ է տեսնում ատելի լուծը թոթափելու համար: Շուտով, մողերի և պարսիկ զորքերի անլուր արարքներից և հայերի նկատմամբ ցույց տված ծաղր ու ծանակից լիոնանում է ժողովրդի զայրույթը: Եվ մի գիշեր հուզմունքով բռնված Վարդանի համախոհ իշխաններն ու ժողովրդի մարդիկ հավաքվում են սպարապետի կայանը և խնդրում են անմիջապես պայքարի զրոյը պարզել: Վարդանն ինձրկե չի հապաղում: Հավաքվածները, իր Սասանյան հապատակությունից գուրս գալու հշան, պատառուում են Հաղկերտի հրօվարտակները և ստքի տակ արորում, այլա հանդիսավոր կերպով երդվում են մինչև վերջ պայքարել իրենց նորատակին հասնելու համար: Այն ժամանակ մի իշխան դեմ գուրս գալով՝ չի միանում նրանց. նրան տեղն ու տեղը քարկոծում են: Գեղեցիկ է նկարագրում եղիշեն ժողովրդական զայրույթի այս բորբոքումը և բռնկումը. «Յայնժամ ամենաքեան ի նախանձ բարկութեան բրդեցան, մինչեւ ամենայն տեսողաց երիկամունք դողային, որք առ ոչինչ համարեցին զպարզես արքունի և առոտն հարին զիրամանու ահազինո»*):

Ամբողջ զիշերը զինվելով ու պատրաստվելով՝ աղատության համար կովի գուրս եկածները առավոտյան Վարդանի գլխավարությամբ հանկարծ հարձակվում են Զարեհավանի մոտ գանվող պարսիկան բանակի վրա և ամբողջովին ոչնչացնում: Այսուեղ ըստում են մարզպան Վասակին և ուղում են սպանել լայց նախարեւթյամբ խոսք է տալիս պայքարին միանալ և ազատվում է: Կարճ ժամանակում հայերը պարսից կայազորներից մաքրում են նաև առանձին բներդերը և երկիրն իսպան ազատում թշնամու զորքերից:

Չեռք բերված այս մեծ հաջողությունից շատ չանցած լուր է ստացվում, որ Հաղկերտի հրամանով ծորա Պահակի մոտ գանվող պարսկական բանակը մտել է Աղվանք և շարժվում է դեպի Հա-

*.) «Այն ժամանակ ամենքն էլ այնպես նախանձի եկան ու զայրացան, որ մինչև անգամ բոլոր տեսնողների երիկամունքները դողովողում էին. նըրքանք արհամարեցին թաղաժորի պարզեները և ստնատակ տվին մեծամեծ հրամանները» (էջ 84):

յաստան: Վարդանն ստեղծված սպառնալից իրազրությունը միանգամայն ճիշտ է կը աղաւատում. մի կողմից աղվաններին: օգնելու, մյուս կողմից թշնամու մուտքը Հայաստան արգելելու համար որոշում է հարձակվողներին կանխել: Նա իր տրամադրության տակ եղած զորքը երեք մասի է բաժանում. մի մասը ուղարկում է Ատրպատականի սահմանը պահելու. մի մասը հանձնում է Վասակին, որպեսզի սա իր իսկ առաջարկած ծրագրի համաձայն Սյունիքից գաղտնի ճանապարհներով անցներ և թիկունքից հարվածեր պարսիկներին, իսկ մնացած մասը ինքը վերցնելով սրբնթաց արշավով հասնում է Աղվանք: Վասակը, որ առաջուց իր մոտ էր պահել մի քանի համախոհ իշխանների, ոչ միայն հանձն առած պարտավորությունը չի կատարում, այլև գաղտնի լուր է ուղարկում պարսկական բանակի հրամանամարտ Սերուխտ մարզպանին, որ ահա ինքը հայերի ուժը ջլատել է երեքի բաժանելով, որ Վարդանի ուժերը փոքրաթիվ են, և խրախուսում է անմիջապես ճակատամարտի բանվել նրա հետ: Այսուհետեւ, հավատացած լինելով, որ Վարդանը կալարտվի, Վասակը ապատամբում է, սկսում է երկիրը քար ու քանդ անել ու Վարդանի հետ գնացած իշխանների աները կորովան, ընտանիքներին գերության վարել և որդիներին իբրև պատանդ ուղարկել:

Վարդանը, չնայած իր ուժերի համեմատական փոքրությանը, նախաձեռնությունը չի թողնում Սերուխտին և Կուր գետի ափին շեշտակի հարձակում է զործում նրա բանակի վրա. հարձակման հետեւանը աղետալի է լինում Սերուխտի համար. նրա զորքի մի մասը կրառվում է, մի մասը սեղմվելով գետին՝ կորչում է ափին գտնվող ճահճներում: Պարսկական բանակի խղճուկ մնացորդները փորձում են նավակներով փրկություն գտնել մյուս ափին անցնելով, բայց ընկնում են նետերի տարափի տակ և դարձյալ ահազին կորուստներ կրում: Այս խոշոր հաղթանակից հետո, Վարդանը շարունակում է արագաթափ առաջ շարժվել և մեկը մյուսի հետեւ պարսիկներից աղտառում Աղվանքի քաղաքներն ու գյուղերը: Նա համում է մինչև ձորա Պահակ, վերացնում է պահապաններին, հրամայում է քանդել կովկասյան լեռնականների ճանապարհները փակող ամրությունները և փոխօդնության գաշինք է կնքում նրանց հետ: Հենց այդ ժամանակ լուր է ստացվում Վասակի դավաճանության մասին:

Վարդանը շտապում է ետ զառնալ: Նրա բանակը այդ ժա-

մահակվա պայմաններում կատարում է մի անօրինակ արագ երթ՝ ձորա Պահակից (Դերբենց) մինչև Հայաստանի կենտրոն ահազին տարածությունը անցնելով մեկ ամսվա ընթացքում։ Վարդանի վերադարձը Վասակի համար լինում է այնքան անսպասելի ու հանկարծակի, որ նա ամեն ինչ թողած փախչում թաքնվում է Սյունյաց կողմերը։

Անհաջողությունից գլուխը կորցրած Հազկերտը փորձում է հայերին խարեռությամբ իրեն ենթարկել։ Նա հայտարարում է, թե ինքը կհրաժարվի բոնությամբ դավանափոխելու քաղաքաւ կանությունից, եթե վայր զրվի զենքը։ Սակայն, ասում է Եղիշեն, բոլոր հայերը այսպես էին մտածում և խոսում երար հետ։ «Բանի՛ լիբր է խորամանկ խարէուրիւն նորա... Զի որ ինքն իր չար է, այլում բարի ոչ կարէ լինիլ. և որ ինքն ընդ խաւար գնա, այլում ոչ առաջնորդէ նշմարտութեան լուսով։ Որպես զի չի՛ յանիրաւորէնէ արդարուրիւն, այսպիս և ոչ ի ստորենէ նշմարտուրիւն, սոյնապէս և ի խոռվասէր մտաց ակնկալուրիւն խալապուրիւն» *): Հասկանալի է, որ արյան զնով ու պայքարով ձեռք բերած ազատությունից ժողովուրդը չէր կարող ինքնակամ հրաժարմիել։ Մյուս կողմից էլ հայերը այդ ժամանակ ստեղծել էին արգեն մի այնպիսի բանակ, որի վրա կարող էին հույս դնել և որից գոզում, սարսափում էր թշնամին։

Զմեռը Փայտակարան քաղաքն է գալիս Հազկերտի հազարապետ Միհրներսէնը, որի ձեռքին էր գտնվում փաստորեն ողջ իշխանությունը, և սկսում է անձամբ զեկավարել Հայաստանի վրա հարձակվելու պատրաստությունները։ Նրա առաջին գործն է լինում իր մոտ կանչել թաքստոց մտած Վասակին հայերի ուժի քանակի և զեկավարների անձնական հատկությունների մասին տեղեկություններ ստանալու և նրա միջոցով այդ ուժը երկարաւակելու համար։ Վասակն սկսում է քայլքայիշ աշխատանք կատարել։ Նրան հաջողվում է հոգեռականության և իշխանների փոքր մասին Հազկերտի կողմը գրավել, սակայն, որ շատ հատկանշական է, նրանց զորքը հավատարիմ է մնում Վարդանին և չի հեռանում բանակից։ Փայտակարանում Միհրներսէնը պար-

*.) «Ինչքան լիբր է այդ խորամանկ խարերան... Ով որ ինքնիրան չար է, ուրիշին համար չի կարող բարի լինել, և ով ինքը խավարի մեջ է զնում, չի կարող ուրիշին ստացնորդել նշմարտության լուսով։ Ինչպես որ անիրաժությունից արդարություն չի լինի, այսպիս էլ ստորթյունից ճշմարտություն չի լինի և ոչ էլ խոռվասէր մտքից՝ խաղաղության հույս» (էջ 110)։

սիկներից և բռնությամբ ու կաշառքով հպատակ ազգություններից հավաքած զորքերից կազմակերպում է մի ահազին բանակ, որի հրամանատարությունը Մուշկան Նիսալավուրտին հանձնելով՝ ինքը վերադառնում է թագավորի մոտ:

Թարնանը Մուշկանի բանակը առաջ շարժվելով մտնում է Հայաստանի Հեր և Զարևանդ գավառը: Վարդանը անմիջապես մի զորաբաժին է հանձնում Առանձար սեպուհին և ուղարկում Պարսից ուժերը կովով հետախուզելու ու նրանց սիռած ասպատակները ոչչացնելու համար: Առանձարը հարձակվում է ներխուժած բանակի մի թերթի վրա, ջարդում և հարկ եղած տեղեկությունները հավաքելով վերադառնում է հաջողությամբ: Վարդանը պատրաստում է հիմնական ուժերը թշնամուն զիմագրավելու համար: Այստեղ Եղիշեն պատմում է այնպիսի մանրամասնություններ, որոնք ցայտուն կերպով բնութագրում են խիզախ զորավարին: Վարդանն, — ասում է Եղիշեն, — հոգ էր տանում ամեն մի զինվորի համար ու հայրաբար խնամում և ում ինչ պակասում էր, աշխատում էր լրացնել: Նա այդ անեղ և ձակատազրական ժամին իր անձնական օրինակով և նշանավոր քաշերի արարքների մասին պատմելով ոգեսրում էր իր մարտիկներին ու բարձրացնում նրանց պայքարի ողին: «Եւ զուարքագին զինեն ցուցանէք ամենեցուն: Եւ ըստ պատերազմական կարգին գքաջ արանց զիշտատակարան երկրորդէր առաջի նոցա» *): Հայա որբան հոյակապ է և բնորոշ ճակատամարտից առաջ արտասանած նրա ճառը, որն, ի հարկե պատմիչի ստեղծագործությունն է, բայց որը հիանալիորեն արտացըլում է հայ ժողովրդի և զորքի սպարապետի ազատամիրական ողին: «Արդ աղաշեմ զձեզ, ով քաջ նիզակակից իմ, — դիմում է Վարդանը իր մարտիկներին, — մի՛ երկուցեալ զագնիտեցուի ի բազմութենէ հերանուացն, և մի՛ յահազին սրբ առն մահկանացուի զբիկունս դարձուացուէ, զի երէ տացէ տէք հաղբուրին ի ձեռս մեր, սատակեսցուի զգօրուրիւն նոցա, զի բարձրացի կողմն հշմարտութեան, և երէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց սուրբ մահու-

*) «Եվ ինքն ամենից դվարթ էր ցույց տալիս իրան: Եվ պատերազմական կարգի համեմատ՝ բաջ տղամարդկանց զործենն էր կըկնում նըանց առաջ» (էջ 135):

ամբ պատերազմիս, լնկալցուք խնդրութեամբ սրտիւ. բայց միայն յարութիւնս քաջութեան վատութիւն մի՛ խառնեցուք» *):

Ճամփին ամեն ինչ քար ու քանդ անելով, բնակիչներին կոտորելով ու կողոպտելով՝ Մուշկան Նիսալավութար հասնում է Սրտադ գավառը և բանակ գնում Ավարայր գյուղի մոտ, Տղմուտ գետի ափին: Շուտով նույն տեղն է հասնում նաև հայկական զորաբանակը: Ճակատամարտից առաջ Մուշկանը փորձում է խարերայությամբ խախտել Վարդանի բանակի միասնությունը: Նա և իր մոտ գտնվող Վասակը անընդհատ պատգամավորներ են ուղարկում և աշխատում են սուտ խոստումներով համոզել հայերին, որ զիմապրություն ցույց չտան. սակայն ոչ մի արդյունքի չեն հասնում և երբ, ճեզությամբ նկատում է Եղիշեն, Մուշկանին այլևս պատգամավոր չի մնում հայերին խարելու, որդշում է կոփին սկսել:

Հայ ժողովրդի պատմության ամենանշանավոր գեաքերից մեկը՝ Ավարայրի ճակատամարտը, տեղի է ունենում 451 թվի հունիս ամսին: Վաղ առավոտյան Մուշկանի զորքերը խոնվում են Տղմուտի ափին, բայց չեն համարձակվում գետն անցնել ու սկսում են կանգնած տեղում գոփել. հայերը, Վարդանի հրամանով չորս գնդի բաժանված առաջինն են գետն անցնում և սկսում են հարձակումը. բորբոքվում է իատաղի ճակատամարտ, որի փառահեղ պատկերը մանրամասն կերպով տալիս է պատմիչը. մեծ ուժով ու զայրությով երկու կողմերը բախվում են իրար. նրանց աղաղակի թնդյունից, ձայների գորդյունից շարժվում էին լուների քարանձավները: Սաղավարտներն ու մերկ սրերը փայլում էին ինչպես արեգակի ճառագայթներ. բացմախառը նիզակների ճոճյունից կրակ էր թափվում, իսկ վահանների կոփյունը և աղեղների լարերի հայթքումը բոլորի ականջն էին խացնում: Կռվի տաք պահին Վարդանը տեսնում է, որ պարսիկները ճնշում են գործադրում հայերի ձախ թևի վրա և խախտում շարքերը: Նա իսկույն իր գնդով հասնում է, այդտեղ ու ջարդում պարսից բանակի աջ թերը. ապա շեշտակի գրոհով

*) Այժմ աղաշում եմ ձեզ, իմ քաջ նիզակակիցներ... չվախենանք, չըվհատենք հեթանոսների շատությունից և ոչ էլ մահկանացու մարդու ահագին ոքի գեմ երես շուռ տանք. որպեսզի եթե տերը հաղթությունը մեղ տաստակիցնենք նրանց զորությունը, որպեսզի բարձրանա ճշմարտության կողմբ. իսկ եթե հասել է ժամանակը, որ այս պատերազմի մեջ ուսւը մահով վը մարենք մեր կյանքը, ընդունենք ուրախ սրտով, միայն թե մեր քաջության մեջ վատություն չխառնենք (Էջ 131):

միաբանվելով Մուշկանի բանակի դասավորության խորքը՝ մըրկաթափի հարվածով ցաք ու ցրիվ է անում ու փախուստի մատնում թշնամու ամենաընտիր զորամասը—Սատյան գունդը: Պարսկեւների համար այդ ճգնաժամային բռակներին Մուշկան Նիսալավորաբը նկատում է, որ Վարդանը իր գնդով շատ առաջ անցնելով կարգել է մյուս զորամասունքից, այն ժամանակ նա իր փղերի հատուկ զորաբաժնի պետ Արաւաշիրին հրամայում է առաջ անցնել և շրջապատել նրան: Վարդանը իր նիգակակիցներով մեծ կոտորած է անում Արտաշիրի փղավոր զորքի մեջ, բայց ի վերջո այդ անհավատար կովում ընկնում է հերոսական մահով:

Կատաղի մարտը շարունակվում է մինչև մուժն ընկնելը: Կորցրած լինելով իրենց գեկավարին, հայերը մյուս օրը հետ են քաշվում և ամբանալով բերդերում շարունակում են դիմադրությունը: Եղիշեն զրում է, որ Ավարայրի ճակատամարտում Մուշկանը չկարողացավ հաղթանակ տանել. սակայն հայերն էլ հաղթանակ ձեռք չբերին. նրա կարծիքով երկու կողմերը իրար դեմ կռվելով իրար պարտության մասնեցին:

Մեծ ճակատամարտի արդյունքի այդպիսի գնահատականի մեջ անշուշտ որոշ ճշմարտություն կա: Բանն այն է, որ Մուշկանը, չնայած իր ահազին գերակշիռ ուժերին, երեք անգամ ավելի մեծ կորուստ է կրում, չկարողանալով վճռական հետեւանքի համեմ որի պատճառով էլ նա կռվից հետո ուրախանալու փոխարեն տագնապի մեջ է ընկնում: Եվ իսկապես, խիստ գժգոհ մնալով Ավարայրի արդյունքից, Զագկերտը հետ է կանչում Մուշկանին ու Վասակին և տեսնելով, որ անհնար է կռվով ընկճել հայերի դիմադրությունը, ստիպված է լինում առժամանակ փոխել իր քաղաքականությունը: Հայերի դիմադրական ուժի մասին Պարսկաստանում թյուր կարծիք ստեղծելու մեղադրանքով՝ Վասակը դատի է տրվում ու զրկվում մարզպանի պաշտոնից ու պատիվներից:

Ժամանակ առ ժամանակ տեղի տալով հանգերձ, Սասանյան բռնակալները, ինարկե, շարունակում էին իրենց հիմնական քաղաքականությունը. տեր ու անօրինություն անելով Հայաստանի մեծ մասում՝ նրանք ժողովրդին ճնշում ու տանջում էին ծանր հարկերով, զանազան միջոցներով աշխատում էին մեղանել նրա հոգևոր կյանքն ու կուլտուրան: Բայց այդ նոպատակին նրանք չկարողացան համար սրովինետե ժողովրդը, ինչ զրության մեջ էլ որ լիներ, ինչ ձեռվ էլ որ լիներ, դիմա-

զբում էր, իսկ այդ զիմագրությունը հաճախ արտահայտվում էր հենց ազատազրական կովով:

Այսպես՝ Ազարայրից մի քանի տասնյակ տարի անցած հայ ժողովուրդը նորից ազատազրական պայքարի դրոշ է պարզում. դրա ժամին արդեն գեղեցիկ կերպով մեզ պատմում է Ղազար Փարպեցին: Եթե Եղիշեն անմահացրեց 451 թվի հայ ժողովրդական ազատազրական մեծ շարժումը, ապա 5-րդ դարի հայ մեծ հայրենասերներից պատմիչ Ղազար Փարպեցին իր գրքում անմահացրել է 481—84 թվերի ազատազրական մեծ շարժումն ու նրա հերոս-մասնակիցներին: Թեպետ Փարպեցին Եղիշեի շլացուցիչ փայլով ոճ չունի, բայց նա այդ պայքարը և նրա ղեկավար Վահան Մամիկոնյանին նույնպիսի խորը համակրանչքով, էպիգմով ու զգացմունքով է նկարագրում, ինչպես Եղիշեն Վարդանին:

Վահանին հանգես բերելով պատմական դեսպերի մի երկար շարանի մեջ՝ Փարպեցին վառ կերպով բացահայտում է նրա խորամտությունը, բնափորության հերոսականությունը, անդրդվիւմ կամքը, ամենածանր փորձություններին սառնաբյուն զիմագրավելու և զրանցից հաջողությամբ գուրս գալու կարողությունը: Ծանոթանանք այն գեղքերին, որոնք պերճախոս կերպով բնութագրում են Վահանին, որպես հայրենիքի պաշտպանության գաղափարին նվիրված մի մարտական գործի ու հերոսի:

Վահանը Վարդանի եղբայր Հմայակի որդին էր. մանուկ հասակում նրան Վասակը խլել էր գայակներից և իրեւ պատանդ ուղարկել Սասանյանների արքունիքը: Վրաց Աշուշա իշխանը խնդրելով և կաշտաելով պալատական մեծամեծներին, մանափանդ Միհրներսեն հազարազետին, նրանց միջնորդությամբ Հազկերտից թույլտվություն է ստանում Պարսկաստանից իր հետ տանել Հմայակի որդիներին: Վահանը մեծանալով աչքի է ըսնկում խելքով ու քաջությամբ: Ճարպիկ քաղաքականությամբ նա զրավում է Հազկերտի հաջորդ Պերող թագավորի վստահությունը և նրա կողմից բարձր պաշտոնների նշանակվում, բայց մյուս կողմից համախոններ գտնելով և համախմբելով ազատազրական պայքարի զաղանի նախապատրաստություն է տեսնում որի առիթը շուտով և ներկայանում է:

Վրաստանում սասանյան լծի գեմ պայքար է սկսում վախտանգ թագավորը: Այդ ժամանակ հայկական զորքը պարսիկ

դրազլուխ Զարմիհը Հաղարտովուխտի հրամանատարության տակ դանդում էր Աղվանքում: Բայս երեսոյթին Վախթանգի կողմից սպասվող թեային հարվածից և հայերի մեջ սկսվող հուզում-ներից վախենալով Զարմիհը որոշում է հեռանալ Աղվանքից և ի մեծ ուրախություն հայ զորքի, ոչ թե Պարուկաստան է զնում, այլ գալիս է Հայաստան: Երբ նա հասնում է Շիրակ, ուր կենում էր Հայաստանի մարզպան Ատրվշնասպը, հայկան զորքը խկույն ապստամբություն է բարձրացնում, որի գլուխն անցնում է Վահան Մամիկոնյանը: Պարսիկները փախչում են Սնի, այնտեղից Արտաշատ: Հայերը հասնում և պաշարում են քաղաքը: Բայց Ատրվշնասպ մարզպանը և մի քանի այլ մեծավորներ զալանի անցքերից գուրս գալով ճողովրում են Ատրպատական: Այսպիս արագ և հաջող է ընթանում ազատազրական պայքարը: Կրկիրը մաքրելով զավթիչներից հայերը մարզպան են ընտրում Սահակ Բագրատունուն, իսկ զորքի սպառապետությունը ստանձնում է Վահանը:

Ատրվշնասպը մի քանի դավաճան իշխաններից տեղեկանում է, որ Վահանի ձեռքի տակ եղած ուժերը փոքրաթիվ են, ուստի Ատրպատականում զանվող զորամասերից շտագ կերպով մի բանակ է կազմում և մտնում Հայաստան: Սահակը և Վահանը ստիպված են լինում մնալ մայրաքաղաք Գյվինում, իսկ պարսիկներին դիմադրելու համար հնարավոր է լինում միայն չորս հարյուր հոգուց բազկացած մի գունդ ուղարկել: Հայերը շտապում են Արաքսի գետանցքին մոտենալ, հույս ունենալով Ատրվշնասպի զորքերին գետն անցնելիս մաս-մաս հարվածել բայց տեղ համնելով իմանում են, որ նրա ամբողջ բանակը արդեն գետն անցել է: Այն ժամանակ Վահանի եղբայր Վասակը հեծյալների մի փոքր խմբով առաջանում է Կոռւակս գյուղը հետախուզության նպատակով: Առավտայան հանկարծ վրա են հասնում պարսիկները և շրջապատում են այդ գյուղը: Իրեն չկորցնեցով Վասակը շրջապատում ից գուրս գալու համար դիմում է հնարամառության: Նա հաշտության կեղծ բանակցություն է սկսում Ատրվշնասպի հետ, որի ընթացքում իր հետ եղածներին փոքր խմբերով ծածուկ տեղերով հեռացնում է գյուղից: Երբ այլև ոչ ոք չի մնում, Վասակը, իր մոտ եկած պատամավորներին ծաղրելով ինքն էլ բարեհաջող կերպով հասնում է յուրայինների մոտ:

Կշոելով իրենց փոքրաթիվ ուժերը, հայերը նպատակահար-

մար են գտնում ճակատամարտ տալ լեռնոտ վայրում և քիչ հետքաշվելով գնում, բանակ են գնում Մասիսի լանջին գտնվող Ակոսի գյուղի մոտ: Առավոտյան Առրվանասպի հեծելաղորը սկսում է հարձակումը. բայց լեռնոտ վայրը հնարավորություն չի տալիս մեծ խմբերով մոտենալ պաշտպանվողներին, մանավանդ որ վատ ձի ունեցազները և անվարժները հետ են մնում: Այս բանը մի քուն հայ խիզախներին հնարավորություն է տալիս ջարդել տեղ հասածներին, ապա հարձակման անցնելով հետ մնացածներին ցըկէ ձորերի ու ժայռերի մեջ և ոչնչացնել: Այս կովում սպանվում է և Առրվանասպ մարզպանը:

Վրա հասած ձմեռը Վահանին հնարավորություն է տալիս նախապատրաստին զարնան սպասվող թշնամու նոր հարձակումը հետ մղելու. նրան հաջողվում է ոտքի հանել աղատազրական շարժման չմասնակցող մի շարք իշխանների և այլպիսով մեծացնել իր ուժերը: Գարնանը Գերող թագավորը իր թիկնապահների վերակացու Առքներսէնի ընդհանուր հրամանատարությամբ մի միջ և ընտիր բանակ է ուղարկում հայերին ընկերություն և երբ պարսիկները հասնում են Հեր և Զարեանդ գավառի սահմանները, Վահանը անմիջապես հավաքում է իր զորքը և շտագում է նույն տեղը: Գել առեալ ընդ իր նախարարսն և զագաւոս և զայլ ամենայն ուամիկն որք կամաւոր խնդրեամբ երային ի գործ պատերազմին, և չունելի ի Դունայ գօրքն Հայոց բար աւորս օրևանացն երեկո հասանէին ի գաւառն յԱրտազ, և մոտեալք ի գունդն Պարսից՝ բանակէին ի գիւղ մի, որում անուն էր Ներսէեապատաշ^{*)}: Փարպեցու այս վկայությունը միանգամայն բացահայտում է պայքարի ժողովրդական-աղատագրական բընույթը: Խոչպես տեսնում ենք ռամբիկները ուրախությամբ և կամագոր կերպով էին գնում պատերազմելու:

Վահանը ճակատի կենտրոնի հրամանատարությունը թողնում է Սահակ մարզպանին, աջ ու ձախ թերերում նշանակում է նմանապես աչքի ընկնող ու հավատարիմ մարդկանց, իսկ ինքը հեծելաղորի մի գունդ վերցնելով որոշում է անակնկալ հարձակումով շփոթություն առաջացնել պարսիկների բանակում: Եթե

^{*)} Առաջ իրա հետ նախարաններին, աղատներին և բոլոր ամբիկներին, որոնք կամավոր ուրախությամբ գնում էին պատերազմելու: Հայոց, զարքը Նվենից ելնելով իջևաններից գուրս անցնելով հասավ Աքտաղ գավառը և ուսենալով պարսից գնդին՝ բանակ դըեց Ներսէեապատաշ զյուղի մոտ (Աջ 282-3, 1908 թ. հբատո):

այդ հարձակումը հաջողությամբ պսակվեր, զա պիտի նշան դասնար ամբողջ ճակատով հայկական զորքի հարձակման անց- նելուն: Սակայն այդ լավ մտածված ծրագրը չի իրականանուած, որովհետեւ Սարսներսէնը առաջինն է սկսում հարձակումը: Բորբո- քում է կատաղի ճակատամարտ: Սահակ մարզպանը և Ատրներ- սէնը նիզակներով հարձակվում են իրար վրա, բայց երկուսն էլ վրիշում են հարվածը, ապա ձիերը մոտեցնելով, իրար մազերից բռնած են կովում: Կովի տաք պահին հայերի աջ թեր չգիմու- նալով թշնամու վերապանց ուժերի ճնշմանը՝ շփոթվում է և սկսում է նահանջել: Վահանը իշխաններից մեկին հրամայում է վերցնել ճեծելազորը, հարձակվել թշնամու վրա և փրկել նահան- ջողներին, բայց նա հրաժարվում է այդ հանձնարարությունից՝ գրությունը միանգամայն անհույսալի համարելով: Այս ժամա- նակ Վահանը ճեծելազորն առաջ ինքն է հարձակվում և այն- քան ուժգին ու շեշտակի, որ հետ շպրտելով պարսիկների առաջ անցած ձախ թեր, շուր է տալիս կենտրոնի վրա ու խառնում աջ թեր զորքերին: Պարսիկները պարկի մեջ մնալով մեծ ջարդ են- կրում. կենդանի մնացածները տագնապահար փախչում են:

Այս մեծ հաղթանակից ճետո, - հայկական զորքը դեռ չէր հանգտացել, երբ վրաց Վախտանգ թագավորի կողմից գեսղան- է հասնում, որը հայտնում է, թե Վրաստան թշնամու մեծ զորք է մտել և թագավորը՝ տեսնելով, որ իր ուժերը փոքր են՝ քաշ- վել է սահմանի մոտ գտնվող հայոց լեռները և Վահանի օգնու- թյանն է սպասում: Անմիջապես հավաքելով զորքը Վահանը հասնում է Վախտանգի մոտ, և առժամանակ միասին սպասում են կովկասյան լեռնականներից օգնական ուժերի գալացան: Սպավող օգնությունը ուշանում է. չնայած զրան, Վահանը ընդառաջելով Վախտանգի խնդիրքին՝ իր բանակը տանում է Վրաստան: Կուր զետի ափին տեղի է ունենում համառ և արյունահեղ ճակատամարտ: Հայերի և վրացիների միացյալ զորքը պարտություն է կրում և ցըվում. կովի գաշտում քաշի մահով ընկնում են Վահանի եղբայր Վասակը և մարզպան Սա- հակ Բագրատուսին: Խորենացու հոչակավոր մեկնասը:

Խեկապես այստեղից է սկսվում Վահանի ողիսականը: Ստա- ցած աղետալի հարվածից բարորպին չընկճած՝ նա մի առժա- մանակ քաշվում է Տայոց աշխարհի ամուռ տեղերը: Այդաեղ նո- րից նրա շուրջն են հավաքվում իշխաններից ոմանք և ցրված զորքը: Սակայն հաղթանակ տարած պարսկական զորագլուխ-

Միհրանը հետապնդում է նրան, աշխատելով կովի մեջ սպանել մի հնաբռով բռնել, կամ համոզելով հպատակեցնել Բայց այս մատղություններից և ոչ մեկը չի հաջողվում նրան։ Այսպես մի անգամ, երբ Վահանը հարյուր մարդկանցով գտնվում էր Մկնառինջ գյուղում, նրանից երկու հրասափ հեռու իր հաղարշներով բանակ է դնում Միհրանը։ Սա չի համարձակվում հարձակվել Վահանի վրա, այլ ամեն օր պատգամավորներ է ուղարկում հաշտություն առաջարկելով, բայց կտրականապես մերժվում է։ Հանկարծ Պարսից արքունիքից դեսպան է զալիս և շտապով Միհրանին կանչում է պարատ։ Միհրանը իր զորքով հեռանում է Հայաստանից։ Այս անգամ Վահանն է հետապնդում նրան և մտնելով Այրաբատ, նորից գրավում է մայրաքաղաք Գեղենը։

Նոր հարձակման նախապատրաստվելով, թշնամին առաջուց խորամանկության է դիմում՝ հայերի ուժը ջլատելու համար։ Ինչ որ տեղից հայտնվում են սատանայի հովի կրող մարդիկ— ասում է Փարավեցին—և հայտնում, որ իրենք Վրաստանում տեսել են Վաստիկին և Սահակ մարզպանին, որոնք իբր թե միայն միրավորված են եղել և հետո առողջացել, այժմ որոնք հետապնդվում են պարսիկներից և ինքրում են իրենց ազատելու համար զորք ուղարկել։ Վահանը թեպես հասկանում է, որ զա թշնամու սարքած թակարդ է, բայց զիջնելով այդ իշխանների հարազատաների թափանձանքին, զորքի մի մասը հանձնում է Մուշեղ Մամիկոնյանին և ուղարկում նրանց փնտուելու։ Խարեբանները ողջ ձմռան ընթացքում Մուշեղին գուր տեղը ման են ածում խուլ ամայի տեղեր, խոր քարանձավներում և բարձր սարերի կատարներին։

Գարնանը հանկարծ Հայաստան է մտնում Զառմիհը Հայարավութառը ընտիր զորքերից կազմված բանակով։ Վահանը թշնամու զերազանց ուժերը տեսնելով թողնում է Դվինը, բայց Զրիմիծի մոտ հանկարծ շուռ գալով իր փոքրաթիվ զորքով հարձակվում է Զառմիհի վրա, նրա զորքի մի մասը հիմնական ուժերից կարելով ջարդում և նորից հետ գանում, սարսափի զգացմունքը թողնելով հետապնդողների սրում։ Այս առթիվ Փարավեցին անում է հետեւյալ խորիմաստ դիտողությունն։ «Վասն զի և բաջարար փախուստ առն եղորի՝ սաստիկ տի երկիրդի գուշակէ առ միւս անգամ զօրծ բշնամեացն զեղին» *):

*). Ըստ որում հզոր մարդու բաջաբար փախչելը սաստիկ երկյուղ է գուշակում թշնամու հետ մյուս անգամ կովելու համար» (էջ 318)։

Հազարավուխտը իր ամբողջ բանակով հետապնդում է վահանին՝ ճանապարհին քար ու քանդ անելով ամբոցները և կոռարելով խաղաղ բնակչությանը։ Բայց Վահանին բանելու կամ կրվում սպանելու նրա բոլոր փորձերը զուր են անցնում։

Որոշ ժամանակից հետո, Պերողը Հազարավուխտին տեղեւկացնում է, որ ինքը մեծ ուժով գնում է Հեփթաղների զեմք կովելու և հրամայում է նրան անցնել Վրաստան ու Վախտանակին ընկճել, իսկ Միհրանի տոհմից Շապուհին իբրև մարզպան զորքի մի մասով թողնել Հայաստան։ Այս անգամ Շապուհն է սկսում հետապնդել Վահանին։ Վահանն էլ անընդհատ տեղից տեղ փոխվելով՝ իր հերթին հանգիստ չի տալիս պարսիկներին, գիշերները նետերի տարափով մեծ շփոթություններ գցելով նրանց բանակում։ Շատ բնորոշ է, որ որտեղ էլ գտնվելիս լիներ Վահանը, տեղի բնակչությունը ուրախությամբ նրան նյօթեական օգնություն էր տալիս և մարդկանց համարումով եւանդուն մասնակցություն ունենում նրա ձեռնարկած ճանկարծակի հարձակումներին։ Մի անգամ, երբ Վահանը հաջող հարձակումից հետո (երբ պարսիկները շփոթված սկսել էին իբրար կոտորել), հանգը լուսանում էր Շտեռ զյուղում, Շապուհին վերջապես հաջողվում է շրջապատել նրան։ Վահանը չի շփոթվում, նույնիսկ այն ժամանակ, երբ իշխաններից ոմանք գործը վերջնականապես տանուել տված համարելով, սարսափած փախչում են։ Խմբելով իր մոտ մնացած փռքաթիվ քաշերին, նա մի ուժգին հարձակումով ձեղքում, անցնում է թշնամու բանակը, ովքեր փորձում են ճանապարհը կտրել անխնա կոտորվում են։ Այս անակնկալից զարհութած և հուսահատված Շապուհը, մտածելով, որ Վահանը կարող է նորից համարում սահանալ տեղայիններից, որոշում է վերադառնալ Դվին և թագավորից նոր զորք խնդրել։ Սակայն կիսաճանապարհին իմանում է, որ Պերողը հեփթաղների երկրում սուսկալի պարտություն է կրել ու ինքն էլ սպանվել։ Շապուհը, այնուհետև շտափում է Պարսկաստան, իսկ Վահանը հետապնդեալով նրան նորից գրավում է Դվին մայրաքաղաքը։

Վրաստանից վերադարձած Հազարավուխտի խորհրդով զոռող Սասանյան Պերողի հաջորդ Վազարշը հրաժարվում է Հայաստան նորից զորք ուղարկելու մտքից։ Նա իր հայտնի քաղաքավետներից Նիխոր Վշնասպատակին ուղարկում է Վահանի հետ հաշտության բանակցություններ վարելու։ Նիխորը չհամարձակվելով Հայաստան մանել սահմանից պատգամավորներ է ուղարկում։

Հահանի մոտ և հայտնում իր գալստյան խաղաղասիրական նպատակների մասին ու խնդրում, որ հայերը իրենց պայմանները առնեն: Նիխորի սկսած բանակցությունները ավարտվում են հաշողությամբ: Այնուհետև վաղարշի հրավերով Վահանը գնում է Պարսկաստան և անձամբ բանակցություններ վարում նրա հետ: Քաղաքորը գոճ է մնում այդ տեսակցությունից և շուտով Վահանին նշանակում է Հայաստանի մարզպան:

Վահանի կողմից առաջարված և Նիխորի ու Վաղարշի կողմից ընդունված, հաշտության պայմաններից մեկն այն էր, որ հայերին բողնվեն հայրենի սեփական օրենքները, որ հայ մարդու ժող չդարձնեն և մոգության համար իշխանություն ու պատիվ չտան: Այսպիսով, շնորհիլ 451 և 482—84 թվերի ազատազրական մեծ պայքարի, հայ ժողովուրդը պահեց իր հայրենի օրենքաները, վերջին հաշվով պահեց իրեն և իր հայրենինիքը: Դուք մեր եղանին եիք ուզում սպանել—տառմ է Վահանը Վաղարշ թագավորն—իսկ այդ նեղության և գտանքին ոչ մեր պատերը և ոչ մենք չհարսնացամեք դիմանալ ու զեմի վերցրիմքի: Այս խոսքերը իրոք վահանին են, թէ Փարզեցունը—դա միւնույն է: Կարեսըն այն է, որ դա արտահայտում է հայ ժողովրդի նվիրական զգացմունքները: Փաստ է, որ 5-րդ դարում հայ ժողովուրդը հերոսարար պայքարեց իր ազատության համար, իր ստեղծած հոգեւոր հայուստ կյանքի ու կուլտուրայի համար և փրկեց այն:

Այժմ, երբ գերմանական լիտիացած Փաշիստ բարբարոսները ձեռք են բարձրացրել սովետական սրբազն հայրենիքի վրա և սպառնում են ոչնչացնել սովետական ժողովրդի ազատությունն ու կուլտուրան, հայ ժողովրդի արի զավակները իրենց պատերից տասնապատիկ ավելի ուժով պայքարում են և կպայշարեն սովետական մյուս ժողովուրդների հետ ձեռք ձեռքի տրված իրենց ազատ կյանքի ու կուլտուրայի պահպանման համար, մի կուլտուրայի, որ մոտ մի հարյուրամյակ է արգեն ինչ կաղված է ուստ մեծ ժողովրդի կուլտուրայի հետ և նրա բարերար աղդեցությամբ հասել է նոր բարձունքների:

Հինգերորդ դարի հայ պատմիչների գործերը, որոնց մեջ իր ժամանակին ամենախոր կերպով արտահայտություն զտավ հայրենիքի պաշտպանության զաղափարը, հետագայում էլ մեր հասարակական կյանքի և մտքի զարգացման համար մեծ նշանակություն ունեցան: Այդ նկատելու համար, բավական է իրը ու ինտել վերցնել թեկուզ մեր նոր գրականության պատմության

փաստը: Մեր զրոգները դաստիարակվել են 5-րդ դարի սլատմիչների գործերում արտահայտված հայրենիքի պաշտպանության զարդարարով, ոգեշնչվել են այդ գաղափարի ծնած հերոսների կերպաբներով, իրենց ստեղծագործությունների համար վերցրել են բազմաթիվ թեմաներ: Այսպես հենց մեր նոր գրականության մեջ հիմնադիրը, Խաչատուր Սրովյանը իր հոչակավոր վեպի առաջարանում գրում է «Հայկ, Վարդան, Տրդատ, Լուսավորիչ քնած տեղս էլ ինձ ասում էին, որ ես իրենց որդին եմ», իսկ նրա հերոսներից մեկը՝ Խղբարաքիլիսի Սարգիս Իշխանը, ժողովրդին ինքնապաշտպանության կոչ անելիս՝ Խըախուսելու համար ասում է. «Հայ չենք, Վարթանա թռոնները չենք, Տրդատու արքնը չեմ մեր սրտումը, Տիգրանի շունչը չի մեր բերնումը»:

Հետաքրքրական է, որ մեր կլասիցիզմի ներկայացուցիչները ապրելեն և վրոպական երկների նույն ուղղության գրողներից՝ իրենց ստեղծագործությունների համար թեմաներ էին վերցնում ոչ թե հին հունական առասպելներից, այլ հայ ժողովրդական առասպելներից, որոնք պահպանվել են Մովսես Խորենացու Հայոց պատմության մեջ: Արքենացու զործը մեր կլասիցիզմի արսենալն է եղել: Կլասիցիզմին հաջորդող շրջանում, բացի Խորենացուց, մանավանդ մեր նոր պոեզիայի սկզբնավորողներին շատ նյութ է տվել և նրանց համար պաշտամունքի առարկա և եղել եղիշեի «Վարդանանց պատմությունը»: Այսպես, Ալիշանը զբեց «Պատուին Ավարայրի» վրիկական պոեմը, Շահազերը իր բանաստեղծություններից մեկում հայրենասերին իբրև զործունեության ուղեցույց հանձնաբարում է «Ոսկե զրքույկն Եղիշեի», և շատ ուրիշ այսպիսի փաստեր: Խակ երբ 50—60-ական թվականներին դարձացավ պատմական ողբերգությունը, թեմաներն ու հերոսները գարձալ առնվում էին գերազանցապես 5-րդ դարի հայ պատմիչներից: Հենց միայն Վարդան Մամիկոնյանի և Արշակ 2-ի մասին զրվեցին բազմաթիվ գրամատիկական գործեր: Բանաստեղծների և գրամատուրզների պես մեր վիպասաններն էլ շատ սիրել և օգտագործել են պատմիչներին: Մուրացանը «Խորհրդավոր միանձնունիք» վեպում իր հերոսունու կըրթության և զաստիարակության համար հանձնաբարում է միայն մի զիրք՝ Եղիշեի պատմությունը: Խակ հայ գրականության ամենախոշոր պատմական վեպերից մեկը, Բաֆֆիի «Մամկելը» կառուցված է Փավստոսի թեմաներով:

5-րդ դարի հայ պատմիչների գործերը, այսօր էլ սովետա-


կան ժողովուրդների մզած սրբազան Հայրենական մեծ պատերազմի պայմաններում պահպանում են իրենց գաղափարական գաստիարակչական արժեքը. այսօր էլ երբ «հայրենիքի պաշտպանության մեծ գաղափարը, որը միշտ հատկապես վառ կերպով դրսեփորվել է ժողովրդի մեջ երկրի համար. ծանր փորձությունների ժամանակներում, այժմ գտավ իր նոր արտահայտությունը, ստացավ նոր բավանդակություն, որովհետև դա սովհետական հայրենիքի պաշտպանության խոր համապարփակ զալափարն էր» («Պրավդա-յի հունվ. 20-ի առաջնորդողից»):

1942 թ. փետրվար:

(204)

ԳՐԱՆՑ 1 Ր. 50 Կ.

ЦЕНА 1 Ր. 50 Կ.



Բիբլ.